

ԿԱՐՄԻՔ

ԱԼՎԱՐԴ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ

«7-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՐԹԱԶԱՓԱԿԱՆ

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»

*խորագրով՝ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ*

Հանրակրթության պետական չափորոշչում, որպես 7-9-րդ դասարաններում «Երկրաչափություն» առարկայի (դասընթացի) ուսուցման առանցքային նպատակներ, սահմանվում են՝ տրամաբանական և ալգորիթմական մտածողության զարգացումը, տարածական պատկերացումների, չափողական հմտությունների ձևավորումն ու զարգացումը, տրամաբանական մտածողության, ապացուցման հմտությունների ձևավորումն ու զարգացումը, կիրառական խնդիրներ լուծելու, գծապատկերներից, պայմանանշաններից, երկրաչափության լեզվից օգտվելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումը:

Այս համատեքստում ատենախոսությունը, նվիրված հարթաչափական հասկացությունների սահմանումների ուսումնասիրման հիմնախնդրին, արդիական է:

«Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի ուսուցման նպատակներից մեկը մաթեմատիկական հասկացություններով աշխատելու միջոցով սովորողների մտավոր ունակությունների զարգացումը խթանելն է և, նաև, այդ հենքի վրա՝ նրանց մտածողության ձևավորումն է, մտքերը հստակ ձևակերպելն ու գրագետ դատողություններ կատարելն է և տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելը:

Այս համատեքստում ատենախոսի կողմից հարթաչափական հասկացությունների ձևավորմանն ու զարգացմանը, դրանց սահմանումների ուսուցմանը միտված մեթոդական գործուն համակարգի առաջադրումը ունի տեսական և գործնական նշանակություն:

«7-9-րդ դասարանների «Երկրաչափություն» առարկայի հասկացությունների սահմանումների համակարգը» խորագրով առաջին գլխում ներկայացված՝ հասկացությունների ձևավորման փուլերը, դասակարգման հիմքերը, սահմանումների յուրացման ճանապարհները, յուրացման վրա ազդող գործոնները հիրավի արտացոլում են հիմնախնդրի լուծման վերաբերյալ արդի միտումները: Ակնառու է առկա մոտեցումների փոխզուգահեռ վերլուծություն և եզրահանգումները հեղինակի ինքնուրույն մտքի արգասիք են:

«7-9-րդ դասարանների «Երկրաչափություն» առարկայի հարթաչափական հասկացությունների սահմանումների ուսուցման հիմնախնդիրները և լուծման ուղիները» խորագրով երկրորդ գլխում առաջին գլխի տեսական դրույթները պրոյեկտվել են գործնական հարթություն:

Բացահայտվել են հասկացությունների հիմնավոր յուրացմանը խոչընդոտող գործոնները, ըստ դասարանների և թեմաների առաջարկվել են դրանց հաղթահարման ուղիներ, որոնց արդյունավետությունը հաստատագրվել է գիտափորձով:

Հարթաչափական հասկացությունների սահմանումների յուրացմանը նպաստող տիպային խնդիրների՝ ատենախոսի կողմից առաջարկվող համակարգը մակարդակային տարբերակմամբ է, համապատասխանում է ուսուցման սկզբունքներին և իրագործելի է:

Ուսուցիչների շրջանում իրականացված հարցախույզն ընդգրկուն է, արտացոլում է հիմնախնդրի բովանդակության ողջ սպեկտրը: Վիճակագրական մեթոդի ընտրման հայտանիշները հիմնավոր են, արդյունքները ստույգ են և հաստատում են առաջադրված վարկածը:

Աշխատանքն առավել ընդգրկուն ու արժեքավոր կլիներ, եթե ատենախոսը ներկայացներ հարթաչափական որոշ հասկացությունների կիրառելիության շրջանակները միջառարկայական և բազմառարկայական իրադրություններում՝ այլ ուսումնական առարկաներում դրանց յուրացման մակարդակը որոշող առաջադրանքերի համաշարի միջոցով:

Աշխատանքի գործնական արժեքը նշանակալի կլիներ, եթե ներկայացված լիներ նաև հարթաչափական հասկացությունների հանրահաշվական կիրառելիության շրջանակները:

Նշված դիտարկումները, սակայն, դրվագային բնույթ են կրում:

«7-9-րդ դասարանների «Երկրաչափություն» առարկայի հարթաչափական հասկացությունների սահմանումների ուսուցման մեթոդիկա» խորագրով ատենախոսությունը բավարարում է ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մաթեմատիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս

Մանկավարժական գիտությունների

թեկնածու, դոցենտ՝

Ք.Ա. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Քնարիկ Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար



Ս.Ս. Բապիրյան